338.1
2 - 25

30 NOV 2009
2 802-10

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

338.1
Հ-25

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳԵԶ. ԳՈՐԾԿՈՄԻ

Հ-

9 SEP 2013

№ 29886

40661-ա

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Գյուղատնտեսության բարձրացման գործում գյուղացիական հիմնական մասսան ներգրավելու և մասնակից դարձնելու նպատակով, գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ։

2. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների նպատակն է աջակցել գյուղատնտեսական ամբողջ սիստեմի վերակառուցման, խորացնել նրա մեջ պլանային սիստեմը, զարգացնել տնտեսության կոլեկտիվ ձևերը, բարձրացնել բերքատվությունը, գյուղատնտեսական ապրանքայնու-

2001
(23152-60)

12413-57

12 SEP 2013



թյունը. — արգլխորհրդակցությունները հետապնդում են հետևյալ նպատակները.

ա) Նշում են գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվիզացիայի և արտադրական կոոպերացման յենթարկելու ձեռնարկումները, ինչպես և առաջադրում են միջոցներ, ուժեղացնելու՝ բատրակ, չքավոր և սակավոր միջակ տնտեսություններին ոգնելու գործում:

բ) Մշակում են հասարակական բազմադաշտյան ցանքաշրջանառության անցնելու նաև մելիորատիվ ու ծառատնկման աշխատանքների ծրագիրն ու միջոցները:

գ) Ծրագրում են ընդարձակելու ցանքերի տարածությունը, մշակում են գարնանացանի և աշնանացանի ծըրագիրը՝ ապահովելու այդպիսիք սերմացույով, առաջադրում են միջոցներ նպատակահարմար ձևով ոգտագործելու կենդանի և մեռյալ ինվենտարն ու գործիքները, ինչպես և այդ կամպանիաների նախապատրաստության համար նշում են այդ ձեռնարկումները:



դ) Քննում են ագրոմինիմումը կիրառելու գործնական միջոցները, սերմերի զտումն ու ախտահանումը, մարգերի, խոտերի հանելը, պայքար մոլախոտերի և վնասատուների դեմ, ցելի պատրաստումն ու ուշ աշնան վարը, գյուղատնտեսական լայն մասսաներին բացատրելով այդ ձեռնարկումների նըշանակությունները, և աչակցելով վոր այդ միջոցները լայն չափով կիրառվեն գյուղացիների աշխատանքների մեջ:

ե) Նշում և քննում են հողամշակության ձևերը, հողը մշակելու և բեր-

քը հավաքելու, լավագույն մեքենանե-
րի և գործիքների կիրառումը, տեխնի-
կական կուլտուրաների մշակությունը,
լավորակ և տեսակավոր սերմացունե-
րի խնդիրը, ցանքսերի պահպանությու-
նը, վնասատուների և մոլախոտերի դեմ
պայքարելու միջոցները, արոտավայրե-
րի բարելավման հարցը, բանջարաբու-
ծության, պտղաբուծության և գյու-
ղատնտեսական այլ ճյուղերին վարկ
տալու խնդիրները։

գ) Նշում և քննում են ցանքսերը
կոնտրակտացիայի ենթարկելու ծրա-
գրերը. գյուղատնտեսական արտադրա-
կան գործիքների համապատասխան
կոմպլեքտների մուծման և նրանց բաշխ-
ման հարցը։

ը) Մշակում են հասարակական
սերմ ֆոնդի կազմակերպման, վարձա-



կետերի, սերմերի ախտահանման ու
սերմազտիչ կետերի, վերանորոգման
արհեստանոցների և տնտեսության հա-
ջող զարգացման նպաստող այլ կենսա-
կան անհրաժեշտ հիմնարկությունների
կազմակերպման ձեռնարկումները։

թ) Քննում են խոշոր և մանր ա-
նասունների բարելավման, բարելաված
ու ազնվացեղ արտադրողներ ունենա-
լու, անասունների համաճարակային
հիվանդությունների դեմ պայքարելու
և այլ հարցերը։

ժ) Նշում և քննում են կոլտնտե-
սությունների, հողհամայնքների և գյու-
ղացիական առանձին խմբերի կողմից
դանազան կամպանիաներին տանելիք
ագրիկուլտուր ձեռնարկումների և բեր-
քատվության բարձրացման միջոցները։

ժա) Մշտական հսկում են ագրո-լի-

ագրոնների աշխատանքներին, վորոնք հետևվում են խորհուրդի կողմից ընդունված հասարակական ագրո-ձեռնակումների կիրառման վրա, իրենց միջից նշանակում են ավագ ագրո-լիազորներ, ղեկավարում են վերջիններիս աշխատանքը և նրանց ցույց տալիս անհրաժեշտ աջակցություն։

ժբ) Աջակցում են գյուղատնտեսական ցուցահանդեսներին և գյուղատնտեսական զանազան ճյուղերի մրցակցության կազմակերպման։

ժգ) Վերահսկում են գյուղատնտեսության դրության ու զարգացման հետ կապված հարցերը, լսվում և քննվում են գյուղատնտեսների հողաշինարարների, անասնաբուժների, խորհրդային տնտեսությունների կառավարիչների, կոոպերատիվների ներ-



կայացուցիչների, կոպերատիվ և այլ կազմակերպությունների, ինչպես և ագրոլիազորների զեկուցումները։

ժդ) Նայում ու քննում են գյուղացիության կողմից առաջադրված գյուղատնտեսական առանձին հարցերի վերաբերյալ յեղած առաջարկները։

ժե) Հանդես են գալիս վորպես նախաձեռնողներ, մոբիլիզացիայի յենթարկելու ազգաբնակչության միջոցները գյուղատնտեսության վերականգման առանձին ձեռնարկումների շուրջը։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

3. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները կազմվում են՝

ա) Գյուղխորհուրդի այն անդամներից, վորոնք ցանկանում են աշխա-

ուել այդ ապարիկում։

գ) Չքավոր—միջակ խավերից ավելի նախաձեռնություն ու ակտիվություն ունեցողներից նրանք, ովքեր ցանկություն ունեն մասնակցելու խորհրդակցությունների աշխատանքներին և զրկված չեն ընտրողական ձայնի իրավունքից։

դ) Տնտեսության հետ կապված մասնագետներից (գյուղատնտեսներ հողաչափներ, անասնաբույժներ և այլն)։

ե) Ագրոխագորներից.

զ) Հողհամայնքների նախագահներից.

է) Գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի վարչության նախագահներից։

ը) Գյուղացիական փոխադարձ օգնության կոմիտեների նախագահներից.



թ) ԼԿՅԵՄ ներկայացուցիչներից.

ժ) Գյուղխորհրդի տերիտորիայի վրա գտնվող կոլտնտեսությունների նախագահներից.

ժա) Կանանց պատգամավորուհիների ներկայացուցիչներից.

ժբ) Գյուղատնտեսական բանվորության կոմիտեյի ներկայացուցիչներից.

5) Արտադրական խորհրդակցությունների անձնական կազմը հաստատվում է համապատասխան գյուղխորհրդի կողմից։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների ընդհանուր ղեկավարը հանդիսանում է համա-

պատասխան գյուղխորհուրդը։

7. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները հրավիրվում են պարբերաբար ճիշտ սահմանված ժամկետներում, սակայն վոչ պակաս քան ամիսը 1 անգամ։

8) Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցության աշխատանքը ղեկավարելու համար՝ վերջինիս կողմից ընտրվում է 3 հոգուց բաղկացած մշտական նախագահություն, վորի մեջ անպայման մտնում է գյուղխորհրդի նախագահը, վորը միաժամանակ հանդիսանում է նաև արտադրական խորհրդակցության նախագահը։

9) Արտադրական խորհուրդակցության նախագահությունը պատրաստում—մշակում է այն հարցերը, վորոնք ներկայացվում են արտադրական



խորհրդակցության քննությանը, հետևում է, վոր առանձին կազմակերպությունները ի կատար ածեն այն վորոշումները. վորպիսիք նրանց հանձնարարված են յեղել արտադրական խորհրդակցության կողմից։

10) Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների բոլոր վորոշումները վերջնական հաստատություն ստանալու համար ներկայացվում են համապատասխան գյուղխորհուրդներին, ուր այդպիսիք քննության են առնվելու մի շաբաթվա ընթացքում։ Գյուղատնտեսական արտադրական խորհուրդակցությունների նախագահությունը հետևում է, վոր համապատասխան յենթակա վերջինի վորոշումները քննվեն իր ժամանակին։

11. Գյուղխորհուրդներին կից

գյուղատնտեսական արտադրական խորհուրդակցությունների վրա տարածվում է գյուղական խորհուրդներին կից մշտական հանձնաժողովների մասին կանոնադրության գործողությունները, որոնք սակայն վերաբերվում են են միայն գյուղատնտեսական հարցերին։

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՀՍԽՀ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Զանգգավգործկոմի տպարան Պատվեր №95
Գլավլիտ № 560 Տիրաժ 400

<< Ազգային գրադարան >>
NL0175992

29.886